Ս.ՇՏԻԿՅԱՆ

ԿԱՐԻՔ ԿԱ՞Ր ՇՏԱՊԵԼՈՒ

Խնդրո առարկա հարցը՝ Լեոնարդո դա Վինչիի Կիլիկիայի հայկական բնաշխարհում եղած լինելու հանգամանքն է, որը վաղուց արդեն հետաքրքրում է բանասերներին: Հանրա–հայտ է, որ Լեոնարդո դա Վինչիի ձեռագրերի՝ «Ատլանտյան մատյան» անվանումը կրող ժողովածվում գտնվում է նրա երկու նամակը, ուղղված Սիրիայի Դավադարին (իմա՛. տիրակալին. Ս.Շ.), որտեղ պատմվում է, թե ինչեր է տեսել և ինչ արկածների է հանդիպել իտալացի հանճարը Կիլիկիայում: Մեր օրերում այդ խնդրին նորից անդրադարձավ "Во–круг света" ամսագիրը (1967 թ. № 7), և գրեթե միաժամանակ՝ «Սովետական արվեստը» (1967 թ. № 4-5), որտեղ փաստալից հոդվածով հանդես եկավ գրող Կոստան Զարյանը: Ավելացնենք, որ այդ թեմայով բազմիցս հանդես է եկել ճարտարապետ Միքայել Մազման–յանը: Վերոհիշյալ հարցերին նվիրված վերջին հոդվածի հեղինակը արձակագիր, բանասեր Վիգեն Խաչումյանն է («Գրական թերթ», 1967 թ., № 38, «Լեոնարդո դա Վինչիի հանելուկը»): Խեչումյանի միտումն անկասկած ազնիվ է, այսինքն՝ հայոց պատմության ընձեռած փաս–տերի միջոցով հավաստել Լեոնարդո դա Վինչիի Հայաստանում եղած լինելու հանգամանքը և հնարավորության սահմաններում ճշտել այն երթուղին, որով անցել է մեծ իտալացին: Եվ այս ազնիվ միտումը իր գեղեցիկ ավարտը կունենար, եթե հեղինակը մի անգամ ևս ի մոտո քններ իր փաստարկները, նորից ճշտեր ճշտելիքը և քններ քննելիքը: Իսկ որովհետև, ցավոք սրտի, դա չի արված՝ հրապարակ է հանվել անկայուն փաստարկ–ների վրա հիմնված մի տեսություն, որը, հենց սկզբից ասենք, չի կարող լուրջ քննության դիմանալ:

Նախ, մի դիտողություն ընդհանուր առմամբ:

«Լեոնարդո դա Վինչիի հանելուկը» հոդվածի առաջին ընթերցումից իսկ, աչքից չի վրիպում այն թեական, երերոտ տոնը, որով գրում է հեղինակը: Գրեթե բոլոր փաստարկ–ների, բոլոր կարևոր եզրահանգումների սկզբից Խեչումյանը անպայման դնում է «Հավանա–կան է», «Կարող է պատահել», «Թվում է», «Թերևս» և ուրիշ այս կարգի «փրկարար օղակներ»: Օրինակ, «Բայց ես հիմա չեմ հորինելու որևէ նոր պատմություն և ասելիքս ԹԵՐԵՎՍ ՍՈՍԿ ՄԻ ՓՈՐՁ է, մի երկու վկայություն տալու...» (Այստեղ և հետագայում ընդգծումները մերն են. Ս.Շ.): Կամ, «Հայերի կապը Ֆլորենցիայում... որտեղ երկար ժամա–նակ ապրում էր Լեոնարդո դա Վինչին, ՉԷՐ ԿԱՐՈՂ ՀԱՏՈՒԿ ուշադրության ու հետա–

քրքրության չարժանանալ...»: Կամ, «Սրանք պատճառներ էին, որ ԿԱՐՈՂ ԷԻՆ ԴՐԴԵԼ Լեոնարդո դա Վինչիի տեղյակ լինել հայոց անցուդարձին...: Մանավանդ ԱՍՈՒՄ ԵՆ, որ նա հաճախ էր հանդիպում հայ վանականների»: Կամ, «Իտալացի և կաթոլիկ Լեոնարդո դա Վինչին ԿԱՐՈՂ ԷՐ ԻՀԱՐԿԵ, և սուրբ Կիրակոսի վանք այցելել», և այլն, և այլն: Եվ շարադրելով իր նկատառումներն այսպիսի «կարող էին»-ներով, հեղինակը հանկարծ իր հոդվածն ավարտում է միանգամայն վճռական և ոչ մի առարկություն չհանդուրժող տոնով՝ «Ես ուզում էի մի երկու բացատրություն գտնել միայն, մի երկու հավանական ենթադրություն, ինչը և փորձեցի անել, դիմելով պատմության զորավոր օգնությանը: ԵՎ ԱՎԱՐՏԻ ՀԱՍԱ»: Իհարկե, ինչպես կտեսնենք, հենց այդ ավարտին է, որ չի կարողացել հասնել Խեչումյանը, բայց մինչև այդ՝ իսկույն ծագում է մի հարց. չի՞ թվում հեղինակին, որ իր հոդվածի տատամսոտ տոնը և նրա անվերապահ եզրակացությունը լրիվ բացառում են իրար:

Գանք հոդվածին, ինչպես ասում են, ըստ էության:

Խեչումյանի այն պնդումը, որ հայերը, կամ ավելի ճիշտ՝ Կիլիկիայի հայոց թագավորությունը, առևտրական-տնտեսական կապեր է ունեցել Ֆլորենցիայի հետ (Լեոնարդո դա Վինչիից առաջ և հետո), միանգամայն ճիշտ է: Այդպես էլ իր հոդվածը սկսել է Խեչումյանը՝ Կիլիկիայի հայոց և ֆլորենտացիների միջև եղած կապերը ցուցադրող փաստերի շարադրմամբ: Սակայն այս ճիշտ ելակետին անմիջապես հաջորդում է սխալ եզրակացությունը: «Սրանք պատճառներ են, – գրում է նա, – որ ԿԱՐՈՂ ԷԻՆ ԴՐԴԵԼ Լեոնարդո դա Վինչիին տեղյակ լինել հայոց անցուդարձին ու հետաքրքրվել Հայաստանով»: «Կարող էին»-ով ասված այս նախադասությունը քիչ հետո դառնում է հաստատուն հիմք ու կռվան, որ մեծ իտալացին մինչև Կիլիկիայի Հայաստան գալը, դեռ իր հայրենի Ֆլորենցիայում, ծանոթ էր հայերին ու հայ ժողովրդին:

Կարիք կա՞ ասելու, որ նման եզրակացությունը պարզապես սխալ է: Կարիք կա՞ ասելու, որ Լեոնարդո դա Վինչին ԿԱՐՈՂ էր ծանոթ լինել հայոց անցուդարձին, բայց «կարող»-ը դեռ չի նշանակում, որ դա հաստատապես այդպես էր, և առավել ևս՝ բոլորովին հիմք չի տալիս կայուն եզրահանգումներ անելու: Ով՝ ով, բայց հայկաբան ու բանագետ Վիգեն Խեչումյանը, անշուշտ, շատ լավ գիտե, որ բանասերների հաճախակի թույլ տված սխալներից մեկն էլ այն է եղել, որ նրանք հնարավոր թվացող ենթադրությունը ընդունել են

որպես կայուն իրականություն, որպես ռեալ հիմք: Այդպիսի մի սայթաքում էլ թույլ է տվել Խեչումյանը:

Է՛լ ավելի լուրջ սխալներ և Կիլիկիայի հայկական պետության պատմությանը վերա–բերվող հարցերում անտեղյակություններ է թույլ տալիս Խեչումյանը, երբ կամենում է ճշտել Կիլիկյան Հայաստանի այն տեղավայրը, որտեղ առաջին անգամ ոտք է դրել Լեո–նարդո դա Վինչին: Սիրիայի Դավադարին գրած նամակում անդրադառնալով այդ հարցին, վերջինս հիշատակում է առաջին հայացքից տարակուսանք հարուցող մի քաղաքի անուն՝ «Կալինդրա», ապա հավելում է, որ այդտեղից ինքը հեռավոր մշուշի մեջ կարողացել է տես–նել Կիպրոս կղզին: «ԿԱՐԾՈՒՄ ԵՄ ճիշտ չէ կարդացվել քաղաքի անունը, – իսկույն հավե–լում է Խեչումյանը, – Կալինդրան պետք է լինի Կանդելորուս, ինչպես կոչում է 14-րդ դարի իտալացի հեղինակ Մարին Սանուտոն...: Իսկ հայերը Կանդելորուսին ասում էին Կալոնա–րոս (ի դեպ՝ ոչ թե Կալոն**ա**րոս, այլ Կալոն**ո**րոս. Ս.Շ.) և սա Սելևկիան է...:

Առայժմ մի կողմ թողնենք Կալինդրա քաղաքի տեղավայրի ճշգրտման հարցը: Ինչպես կտեսնենք, հենց այստեղից էր, որ պետք է սկսեր Խեչումյանը, և այս ճշտումը վճռական նշանակություն կունենար Լեոնարդո դա Վինչիի նամակի հետագա շա–րադրանքը ըմբռնելու համար: Նշենք միայն, որ իր որդեգրած մեթոդի համաձայն, այստեղ էլ հեղինակն իր ասածը հիմնավորում է սոսկ մեկ «կարծում եմ»-ով, և դա հետագայում դարձնում է միանգամայն հաստատուն կռվան: Նշենք նաև, որ ճիշտ չէ այն միտքը, թե հա–յերը Կալոնորոսն ու Սելևկիան նույնացրել են: Հանրահայտ ճշմարտություն է, որ սրանք երկու տարբեր քաղաքներ էին Կիլիկիայի հայկական պետության կազմում, առաջինը՝ Անամուրի հրվանդանի արևմտյան, երկրորդը՝ արևելյան կողմում, իրարից մոտ 160 կմ հե–ռավորության վրա (հաշված ուղիղ գծով): Կալոնորոսը, անվան բազմապիսի փոփոխու–թյուններ կրելուց հետո, այսօր կոչվում է «Ալանյա» և այդպես էլ գոյություն ունի այժմյան Թուրքիայի հարավային ափին: Առ այսօր «Սելևքե» անունով գոյություն ունի նաև մյուս՝ Սելևկիա քաղաքը: Այնպես որ, վերոհիշյալ երկու քաղաքների նույնացման հարցում հայերին վերագրվող այդ սխալը առայժմ թույլ է տվել միան Խեչումյանը: Լրացուցիչ տեղե–կություններ համար խորհուրդ կտայինք նայել վերջերս հրատարակված «Հայ ժողովրդի պատմության» երկրորդ հատորի[1] վերջում զետեղված քարտեզը:

Վերադառնանք Կալինդրային:

[1] Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Երևան, 1965:

Իր գոյության մոտ երեք հարյուր տարիների ընթացքում Կիլիկիայի հայկական պետության քաղաքների անունները, ըստ նվաճողների ցանկության ու քմահաճույքների, բազմաթիվ անգամ փոփոխությունների ենթարկվեցին: Այս տեսակետից առանձնապես դժբախտ ճակատագիր վիճակվեց վերոնշյալ Ալանյա քաղաքին: Մեզ հասած նրա հնագույն անվանումը Կորակեսիոնն է, որը, ինչպես հավաստիացնում է Էփրիկյանը, հունական ծագում ունի: Սկսած 12-րդ դարից, այսինքն՝ այն ժամանակվանից, երբ իշխանության գլուխ է անցնում Լևոն Բ թագավորը, քաղաքը ստանում է նոր անվանում՝ Կալոնորոս, որով և հայտնի է դառնում մասնագիտական գրականության մեջ: Այդպես էլ շարունակվում է մինչև 14-րդ դար, մինչև այն ժամանակ, երբ արաբ ճանապարհորդ և մատենագիր Իբն Բատուտան, Մերձավոր Արևելք կատարած իր ուղևորության ժամանակ, անցնում է նաև Կիլիկիայի ծովեզրյա քաղաքներով, նաև՝ Կալոնորոսով: Այս կապակցությամբ էլ, ահա, արվում է մեզ համար շատ կարևոր հետևյալ դիտարկումը. «Ես անցա Կալոնորոս քաղաքով, որն ավելի գեղեցիկ էր ու հիացնող, քան իմ տեսած մյուս քաղաքները...: Այդ քաղաքն արդեն կոչում են Կոլինդարա, չնայած որ դեռ պատահում են մարդիկ և հատկապես նավաստիներ, որոնք օգտագործում են նաև հին անունը: (Այնուհետև հաջորդում է քաղաքի մանրամասն նկարագրությունը, բնակիչների հյուրասեր լինելը և այլն. Ս.Շ.)»: Քաղաքն այս նոր՝ Կոլինդարա անվանումով է կոչում նաև 14-րդ դարի մեկ այլ ճանապարհորդ՝ Ֆրանչեսկա Պերգալոտին: Կոլինդարա ձևը հիշատակում է նաև Ալիշանն իր «Սիսուան և Լևոն Մեծագործ» աշխատության մեջ[2]:

Որ այս Կոլինդարան և Լեոնարդո դա Վինչիի հիշատակած Կալինդրան միևնույն քաղաքն է, դրանում տարակույս լինել չի կարող, մանավանդ որ իտալացի հանճարը տալիս է նաև քաղաքի աշխարհագրական կոորդինատները («Տավրոսյան լեռների այս կողմի ծովափում, Եփրատից բաժանված և ի տես Մեծ Տավրոսի, որը բարձրանում է արևմըտյան կողմում», և ապա՝ «Այստեղից ձեր առաջ բացվում է Կիպրոս կղզին»), որոնք մաթեմատիկական ճշգրտությամբ համընկնում են պատմական Կալոնորոսի հետ: Եզրակացությունը բխում է ինքնըստինքյան: Լեոնարդո դա Վինչին եղել է Կիլիկիայի հայկական Կորակեսիոն-Կալոնորոս-Կոլինդարա-Ալանյա (վերջին շրջանում) քաղաքում, որի անունը ամենևին էլ սխալ չի կարդացվել և այն բոլորովին չի նույնանում Սելևկիա-Սելևքեի հետ, ինչպես կարծում է Խեչումյանը:

---

[2] Ավելի մանրամասն, տես՝ Ս. Էփրիկյան, Բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1902-1905, էջ 32: Ալիշան, Սիսուան և Լևոն Մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 245 և հտն: «Հանդես ամսօրյա», 1889, №№ 6, 7 («Լեոնարդո դա Վինչի ի Հայաստան»): Микаелян Г.Г., История Киликийского армянского государства, Ереван, 1952, стр. 86, 239 и т.д.

Կոլինդարայի ճշգրտումից էլ բացահայտվում է մեկ այլ «մութ կետ» Լեոնարդո դա Վինչիի նամակում, որի մասին անհրաժեշտ է մի քանի խոսք ասել: Դիմելով Սիրիայի Դա–վադարին, նա իր նամակը սկսում է հետևյալ կերպ. «Գտնվելով ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՅՍ ԿՈՂ–ՄՈՒՄ, սիրով և խնամքով վերջացնելու համար այն գործը, որի համար դուք ինձ ուղարկել եք...»: Ընդգծված արտահայտությունը շփոթություն և տարակուսանք է հարուցել Խեչումյա–նի մոտ: «Նախ ասեմ, - գրում է նա, – ինձ զարմացնում է այն, թե ինչու է գրում «գտնվելով Հայաստանի այս կողմում»: ՈՒրեմն ինչ՝ Հայաստանի այն կողմում արդեն եղել է ու վերա–դարձե՞լ: Տարօրինակ է, և այդ պատճառով սա մի կողմ եմ թողնում»:

Ինչպե՞ս պետք է հասկանալ Լեոնարդո դա Վինչիի նամակի՝ վերոհիշյալ արտա–հայտությունը: Դրա համար նորից դիմենք պատմությանը: Մեծ իտալացին Կիլիկիա պետք է եկած լինի, և սա կարելի է ճիշտ համարել, 1470-ական թվականների մոտ: Սակայն հարցն այն է, որ այդ ժամանակաշրջանում Կիլիկիայի հայկական պետությունը արդեն հարյուր տարի գոյություն չուներ: Հայտնի է, որ երբ եգիպտական մամլուկները գերեցին Լևոն 4-րդ թագավորին (1375 թ.), Կիլիկիայի հայկական պետությունը դադարեց գոյություն ունենա–լուց, իսկ երբ 1441 թ. հայ լուսավորչական եկեղեցու հոգևոր կենտրոնը Սիս քաղաքից տե–ղափոխվեց Էջմիածին, Կիլիկիայի հայկական պետությունը վերջնականապես դուրս եկավ պատմության ասպարեզից: Բուն պատմական Հայաստանը, «Մեծ ու Փոքր Հայքերի Հա–յաստանը», այսպիսով, մնացել էր Հյուսիսում՝ Կալոնորոս քաղաքի համեմատությամբ (որ–տեղ, ինչպես ասացինք, գտնվում է Լեոնարդո դա Վինչին) «այն» կողմում: Բնականաբար, Կալոնորոս քաղաքն էլ գտնվում էր պատմական Հայաստանի նկատմամբ հարավում, այսինքն՝ «այս» կողմում: Հետևաբար «Գտնվելով Հայաստանի այս կողմում» արտահայտու–թյունը պետք է հասկանալ այն իմաստով, որ Լեոնարդո դա Վինչին գտնվում էր պատմա–կան Հայաստանի նկատմամբ դեպի հարավ, այսինքն՝ «այս» կողմում գտնվող Կալոնո–րոսում: Չմոռանանք այս տեսակետը հաստատող մեկ այլ փաստ ևս: Ինչպես արդեն ասացինք, հաղորդելով Կալոնորոսի աշխարհագրական տեղը, Լեոնարդո դա Վինչին դարձյալ օգտագործում է նույն արտահայտությունը, որ վերջինս գտնվում է «Տավրոսյան լեռների ԱՅՍ ԿՈՂՄԻ ծովափում»: Եվ իրոք, Կալոնորոսը գտնվում է Տավրոսյան լեռներից հարավ, այսինքն՝ այդ լեռների նկատմամբ «այս կողմում»: Հետևաբար թե՛ այստեղ, և թե՛ նախորդ դեպքում, «այս կողմ» ասելով, իտալացի հանճարը շեշտում է տվյալ վայրերի նկատմամբ իր՝ ավելի հարավային դիրքում գտնվելու հանգամանքը, որը և հաստատվեց պատմական այլ տվյալների օգնությամբ: Այսպիսի հետևությունների, անշուշտ, կհանգեր

նաև ինքը՝ Խեչումյանը, եթե նախապես կարողանար ճշտել Կալինդրա քաղաքի հետ կապ–
ված մանրամասնությունները, և, որ արդեն աններելի է, չշփոթեր այդ քաղաքը Սելևկիայի
հետ: Իսկ քանի որ դա չի արվել, հեղինակը կորցրել է այն միակ ճշմարիտ թելը, որը նրան
կարող էր ուղիղ ճանապարհ դուրս բերել:

Հոդվածի շարունակությունն արդեն զավեշտական պատումի տպավորություն է
թողնում և պակասում է միայն ավանդական «Լինում է, չի լինում»-ը, որպեսզի վերածվի
հեքիաթի: Լեոնարդա դա Վինչին իր նամակի շարունակության մեջ գրում է. «Ես հավա–
տացած եմ, որ վերջերս պատահած աղետը, կատարված մեր հյուսիսային երկրներում,
կցնցի իր ահավորությամբ ոչ միայն քեզ, այլև ամբողջ աշխարհը»: Հավատարիմ մնալով
պատմական փաստերն ամեն կերպ նամակին հարմարեցնելու իր մեթոդին, Խեչումյանն
ընդամենը մեկ նախադասությամբ «պարզում է», թե ինչ է ակնարկում մեծ իտալացին և այդ
մեկ նախադասության մեջ թույլ է տալիս ճակատագրական սխալ: Մեջբերելով վերոհիշյալ
հատվածը և նշելով, որ Լեոնարդո դա Վինչին Արևելք էր եկել Սիրիայի տիրակալի հանձ–
նարարությամբ, Խեչումյանը գրում է. «Սիրիայի տեղակալից հանձնարարություն ստանա–
լը, Լեոնարդոյի հետաքրքրական գործ որոնելը և Հայաստանի մի քաղաքում տեղի ունեցած
կործանարար աղետը, ԱՅՍԻՆՔՆ՝ ՄԵԾ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ, համընկնում են և՛ ժամանակով, և՛
իրերի բերմամբ»:

Մեծ բանասեր պետք չէ լինել համոզվելու համար, որ ընդգծված իմաստը բոլորովին
չի բխում նամակի՝ վերևում բերված հատվածից: Ակնհայտ է, որ Լեոնարդո դա Վինչին թե–
թևակիորեն անդրադարձել է հայկական քաղաքներից մեկում տեղի ունեցած կործանարար
աղետին, որը, սակայն, ամենևին կռվան չէ պնդելու, որ այդ աղետը այլ բան չէր կարող լի–
նել, այլ միայն և բացառապես երկրաշարժ: Տվյալ դեպքում գործ ունենք սխալ եզրակա–
ցության հետ, որը ոչնչով չի պատճառաբանվում: Ավելին, Խաչումյանն իր տեսակետն
ապացուցելու համար մեջբերել է Լեոնարդո դա Վինչիի նամակի միայն առաջին հատվածը,
իսկ շարունակությունը պարզապես մի կողմ է թողել: Ահա նամակի երկրորդ հատվածն
ամբողջությամբ. «Նախ մենք հարձակման ու բռնության ենթարկվեցինք զորավոր և կատա–
ղի քամիների կողմից, և կարծես դա քիչ էր, մեծ ձյունամրրիկներ լցվեցին հովիտը, քան–
դեցին քաղաքի մի մասը և դեռ ավելի՝ ջրհեղեղը ծածկեց քաղաքի ներքևի մասը: Ապա հան–
կարծակի կերպով անձրև թափվեց, և գահավիժեց ջրերի մի հեղեղ, խառնված ավազին,
ցեխին և քարերին, վայր թափեց արմատներ, տունկեր և ճյուղեր և քշեց իրեն հետ: Եվ վեր–
ջապես, դրան հաջորդեց մի հսկայական հրդեհ ոչ միայն քամիների պատճառով, բայց նաև

մոտ 30,000 հրոսակների պատճառով, որոնք քար ու քանդ արին երկիրը և շարունակում էին քանդել: Սակավաթիվ վերապրողները այնպիսի հուսահատական վիճակումն են, այն–պիսի սարսափի մեջ, որ ապշածների նման հազիվ համարձակվում են մեկ մեկի հետ խո–սել: Ամեն ինչ թողած, մեկ-մեկի կպած ապաստանել են եկեղեցիների ավերակներում՝ մար–դիկ ու կանայք, մեծ ու փոքր, ինչպես վախեցած այծերի մի հոտ: Եթե չլինեին նրանք, որոնք մեզ օգնեցին քիչ ուտելիք տալով, չնայած որ առաջ մեր թշնամիներն էին, մենք կմեռնեինք անոթությունից»[3]:

Կարծում ենք կարիք չկա լրացուցիչ մեկնաբանությունների: Փոխանակ մանրակըր–կիտ քննությամբ պարզաբանելու նամակում հիշատակված կարևոր եղելությունները, որոնք, անշուշտ, նոր ու հետաքրքիր փաստեր ի հայտ կբերեին, Խեչումյանը, թերևս գի–տակցաբար, անտեսել է այդ ամենը, իր «երկրաշարժային տեսությունը» հիմնավորելու հա–մար...

Իսկ այդ, թող ներվի ասել, տեսությունը անհրաժեշտ է եղել հեղինակին հետևյալ միտքը զարգացնելու համար: Առաջին, քանի որ Լեոնարդո դա Վինչին ակնարկում է ան–պայմանորեն երկրաշարժ, ուրեմն նա նկատի ունի 1482 թվականին Երզկա քաղաքում տեղի ունեցած երկրաշարժը: Հետևաբար, նա եղել է Երզնկայում և իր աչքով տեսել է քա–ղաքի ավերվելը: Խեչումյանին, իհարկե, չի էլ մտահոգել այն հանգամանքը, որ Կալոնորո–սից Երզնկա հասնելու համար իտալացի հանճարն անցնելու էր մոտ 450 կմ, հաղթահա–րելու էր Արևմտյան Կիլիկիան, Կենտրոնական և Ներքին Տավրոսի լեռնաշղթաները, չհաշ–ված բազմաթիվ զանգվածային անտառաշերտերը: Եվ երկրորդ, քանի որ Լեոնարդո դա Վինչին նամակի վերջում նշում է, թե ինքը նկատել է մի բազիլիկ շինություն և տեսել է խա–վարի մեջ բարձրացող մի լեռ, խեչումյանը անում է մյուս եզրակացությունը, Լեոնարդոն տեսել է... Անիի Կաթողիկեն, որից հետո՝ Արարատ լեռը: Խեչումյանին դարձյալ չի մտահո–գել այն, որ Երզնկա-Անի-Կարս-Արարատ լեռ ճանապարհը գրեթե հավասար է նախորդին և ունի մինչև 420 կմ երկարություն, չհաշված աշխարհագրական-երկրաբանական բնույթի բազում արգելքները: Չի մտահոգել, որ այսպիսի երկար ճանապարհորդություն, այսինքն՝ մոտ 900 կմ, ոչ միայն ոչնչով չի պատճառաբանվում, այլև անկարելի է անգամ այսօրվա տեխնիկայի պայմաններում: Չի մտածել, որ շուրջ 900 կմ ուղերթ կատարած դա Վինչին

[3] Սովետական արվեստ, 1967, № 5: Օգտվելով առիթից, նշենք, որ Լեոնարդո դա Վինչիի նամակների թարգմանությունները, որոնք իտալերեն բնագրից կատարել է Կոստան Զարյանը, հայերեն ստացվել են բավականաչափ խորդուբորդ ու անհարթ:

նորից պիտի հետ դառնար, այսինքն՝ ընդհանուր հաշվով անցներ 1800 կմ ընդամենը մի ամառվա ընթացքում:

Վիգեն Խեչումյանն աշխատել է եզրահանգումներ անել ոչ թե ըստ փաստերի (հիշենք, որ այս վերջին ուղերթի մասին մեծ իտալացուց մնացած որևէ գրություն առ այսօր չկա), այլ իր մտքում կառուցած ու նախապես ձևակերպած սխեման աշխատել է մի կերպ հարմարեցնել ձեռքի տակ եղած փաստերին: Իսկ սրա հետևանքն այն է եղել, որ Խեչում–յանը, չնայած իր բարի ցանկությանը ամեն կերպ նպաստելու գործին, ոչ միայն ոչինչ չի ավելացրել Լեոնարդո դա Վինչիի՝ դեպի պատմական Կիլիկիա կատարած ճանապարհոր–դության քննությանը, այլ ավելի է բարդացրել դրա ստուգաբանման հետ կապված առանց այն էլ բարդ աշխատանքը:

Սովետական արվեստ

1968, № 12, դեկտեմբեր